թարգմած է « անպատճառ հետեւակ » բառ մը գտնել, իբրեւ զօրք, Փարպեցին կը գրէր անշուշտ « հետեւակ զօրաց » (կամ անենժուաց անձի զօրաց) և ոչ թէ արանց, որպէս ամենայն մարդ՝ որ չէ զինուոր։ Նոյն իսկ Փարպեցւոյ կրկին մասի բաժանելը, հրաշքի արդիւնքը արդէն ցոյց կու տայ որ « զիւրաւ ըստ կամի » անցողները զինուոր չեն, այլ ժողովուրդը[1]։

Հ. ԳԱՌՈՒՆԻ ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

الحرب و مقالاته

ՀԱՐԻՐԻՆ ԵՒ ԻՐԵՆ ՄԱԳԱՄԱԹԸ

1. Ակնարկ մը Արաբ մատենագրութեան և Հարիրիի դարուն. — 2. Հարիրիին կենսագրութիւնը. — 3. Իր Մագամաթը. — 4. Իրեն ուրիշ գրութիւնները։

Արաբերէնի նման չկայ ուրիշ լեզու մը, որ այնչափ ընդարձակ ծաւալում ունեցած ըլլայ։ Լատինը խօսուեցաւ կամպանիայէն մինչեւ Բրիտանական կղզիները, Հռենոսէն մինչեւ Աղլասը։ Յունարէնը ճամբորդեց Սիկիլիայէն մինչեւ Տիգրիս գետը, սեւ ծովէն մինչեւ Ապիսինիա. այլ Արաբերէնը իրեն անյագ ընդայնումովը, ընդգրկեց Սպանիա, Աֆրիկէէն մինչեւ հասարակածը, տիրեց արեւմտեան Ասիոյ մինչեւ Թիպէդի սահմանները, և արեւելեանին՝ մինչեւ Փազա ու Ռուսաստան։ Արաբերէնը, որ Սեմական ընտանեաց լայն հիւղերէն մին է, ունի իր առանձին յատկութիւնները, շարադրութեան պարզութիւն, արմատներու ճոխութիւն, հոմանիշներու բազմութիւն, անհամար ձեւ և ոճ բանից։

Կլիմային ազդեցութիւնը՝ արեգական սիրելի երկիրներու վրայ, ինչպէս Արաբիոյ, ուր մարդս առանց աշխատութեան գտնելով իր նիւթական նեցուկը՝ կրնայ ինքզինքը մտածութեանց տալ տոչորող երկրնքի տակ, ուր զգացման դրդումը արագ կը ծաւալի և աւելի պարզ կը յայտնուին հոգւոյ ու զգայարանաց կապերը, ներդաշնակ և կտրուկ բացատրութեանց ձեռքով։ Կենաց այս պայմանները, բնական և բնածին հակամիտութիւն մը սահմանեցին արաբացւոց համար բանաստեղծութիւնը։ Նախնական շրջաններէն հասած են մեզի արաբացւոց քնարի երգերէն շատերը, որոնց մէջ գլխաւորներ են Գասիտաները[2], և Մուալլագա[3] ըսուած բանաստեղծական հատուածները։

Արաբ լեզուն, որ շատ յարմար է տաղաչափական գրութեանց՝ իրեն հոմանիշներով և ներդաշնակ առոգանութեամբը, հաւասարապէս յարմար է նաեւ արձակ գրութեանց, և մասնաւորապէս ցանգաւոր բարձր արձակ գրութեանց, որ և տաղաչափական գրութեանց ալ շատ մերձաւոր են[4]. և այս տեսակ գրութեամբ առաջին

իշխանական անուն ունին կամ լաւ հարուստ անուններ, որոնց առուծախի ժամանակ վկայականով պիտի հաստատեն նրանց ծծոյգ լինելը. ով կու տար Վահանին այդքան ծծոյգ որու վրայ նստէին իր բոլոր զինուորները և ի միջի այլոց ... մեր քննագրաններ։ Բաց սասի դասական ոճն չի հանդուրժեր որ ծծոյգի և ծիոյ վերայ հեծած երկու ժխտողական « ամ »եր իրարու ետեւից արշաւեն ոտանակոր անելով մարդկանց և նրանց լեզուական ճաշակ, եթէ Փարպեցու « հետեւակ »ները յանկարծ ճամբու վրա « անենժուաց անձի արանց »ի նման մի հայկաբանութեան հանդիպէին, իսկոյն նեժոյգների վրայ նստած կը փախչէին այնքան շտապ տաղնապով, որ բարձրացած փոշոյ ամպերի մէջ կը ծածկուէին և մեր ... քննագատի տեսութիւնէն։

1. Ձեմարանիս երիցագոյն անդամներէն մին դիտել տուաւ վերոյիշեալ ընթերցման նկատմամբ՝ թէ ինչ հարկ կայ Ան ոյժը սրբագրել. « Որ և առ ոյժ կանացի արանց դիւրաւ լինէր անցանել » այսինքն « նոյն իսկ կանացի մարդկանց ոյժին համար դիւրին էր անցնիլ, անոնց « ոյժն անգամ բաւական էր », այլն։ Ճ.

2. Արաբական տաղաչափութեան հին ձեւերէն մին է. համառօտ և կտրուկ ոտանաւորը կ'ըսուի Գասիտա, որ եօթն կամ տասը տողերէ պակաս չ'ըլլար։ Առաջին Գասիտաները գրեց Մուհալլալ՝ Ե. դարուն մեր թուականին,

3. Մուալլագա(ղ) معلقة (կախուած) Մահմետականութենէ առաջ ամենահին բանաստեղծութիւններն են, կախուած կոչուած են Մէքքէի Գաբէ տաճարին մէջ կախուած ըլլալնուն համար, վասն զի ինչպէս յունաց՝ այսպէս և արաբացւոց մէջ Գաբէ տաճարին մէջ կը պահուէին բանաստեղծները. կ'ըսուի նաեւ թէ Մուալլագաները ոսկի մելանով գրուած էին։ Մուալլագաները եօթ հատ են,

4. Արաբական գրականութեան մէջ այս ձեւի գործածութիւնը գոյութիւն ունի նաեւ Հայոց մէջ. Ս. Ներսէս Լամբրոնացւոյ հառերէն և աղօթքներէն ոմանց ար-

digitised by A.R.A.R.@

նախատիպ գլուխ գործոց մը խմբագրուեցաւ Ղուրանը, որ Գուրայշէանց[1] գաւառաբարբառին ամենէն աւելի գեղեցիկ և դասական օրինակն էր։ Այլ Ղուրանի լեզուն առ ժամանակ մի անգործածութեան պիտի ենթարկուէր մինչեւ խալիֆայից, Աբբասեանց թագաւորաց ժամանակ որ Արաբացւոց մատենագրութեան իրաւապէս ոսկեդարն է, երբ զարմանալի յառաջադիմութեամբ գրականութիւնը մէկ օր միայն մանկութիւն ունենալով չափահաս եղաւ արագ արագ զարգացումով։ Էլ-Մամուն Սուլդանը հիմնեց Պասրայի, Քուֆայի, Պուխարայի և Սամարղանտի համալսարանները. այս դարուս մէջ արաբերէն թարգմանութեան Ասորւոց, Պարսից, Ղփտական և մանաւանդ Յունաց իմաստասիրական ու գիտական գրքերը. պատմութիւնը, թուաբանական և իմաստասիրական ուսմունք մեծ խանդով սկսան ծաղկիլ. բանաստեղծութիւնն իր գագաթնակէտը հասած էր, որուն հաւասարաքայլ կ'ընթանար Յունգաւոր բարձր գրութիւնը, ծաղկելով բանաստեղծական նամակագրութեան ձեռքով, և ապա հռչակուեցաւ Մագամաներով[2] որոնց մէջ ամենանշանաւորն է Հարիրիի Մագամաթը, — արաբական հանճարին պարծանքը։ Այս դարուս մէջ Բարձր և յանգաւոր արձակ գրիչներ շատերը եղան որոնց մէջէն Իպհն Նուպպատա, ծն. 946, որ Հալէպի ամիրային (Սայֆ-էլ-Տավլայ) արքունեաց մէջ իբրեւ քարոզիչ خطيب էր։ Իր ճառերը պատերազմական կրակը կը շնչեն, մոլեռանդ մ'է. կը գրգռէ ժողովուրդը օգնելու իր մեկենասին խաչակրաց դէմ, որոնց յաղթութեանց դրօշները կը ծածանէին այն սահմանաց բարձանց վրայ։ Իրեն նման եղաւ Ապու Պէքր-էլ-Քարեզմի, Պատի-էլ-Զաման կոչ Հարիրին կը գովէ. և ուրիշներ։ Ասոնցմէ աւելի բարձր գրիչներ հանդիսացան իրենց Մագամաթներովը, Իպհն-էլ-Քուդայպայ իրեն Իխուն-էլ-աբպար գրութեամբը, և Էլ Համատանի — զոր Հարիրին իր Մագամաթի յառաջաբանին մէջ գովեստով կը յիշէ. — ինքն առաջին անգամ հաւաքեց այլ և այլ զուարճալի պատմութիւնները այն վարպետորդի և խաբեբայ մուրացկաններուն որ գիտնականի և բանաստեղծի տաղանդով օժտուած իրենց հարստասանութեամբը և արաբերէն քերականութեան կատարեալ հմտութեամբը իրենց ապրուստը կը ճարեն աստ անդ թափառելով, մեծամեծաց առջեւ արտասանելով իրենց բանաստեղծական հատուածները որոնց հետեւողութիւնը վերջը պիտի տեսնուէր արեւմուտքի վերածնութեան ժամանակ, երբ թրուպատուրները և թրուվերները նոյն դերը կատարէին։ Համատանիին նպատակն էր նոր գրական լեզու մը ստեղծել, կամ աւելի՝ Ղուրանի լեզուն թմրութենէ արթնցնել, զոր կենդանացնելն ցանգաւոր արձակը զենիթը հասցընելու փառքը Հարիրիին վերապահուած էր որուն փառաց պսակը միշտ դալարազարդ պիտի փթթի իր ազգին և միջազգային գրականութեան մէջ։

*

2. *Հարիրիի վարքը.* — Հարիրին[3] ծնած է 1054ին, Քրիստոսի թուականին, Պասրայի շրջակայքը Մաշան քաղաքը, որ շատ

ծակ յանգաւոր են, և կը պատկանին ճշդիւ արաբական բանաստեղծութեան վերոյիշեալ հիւղին,

1. Գուրայշեանք Մահմետի ցեղն էր, որ յաղթանակից միւս ցեղերու վրայ ոչ միայն զօրութեամբ այլ և հանճարի արտադրութիւններով։

2. Մագամաթ, արաբ. مقامات Մագամաթ مقامة բառին, յոգ. ձեւն է, կը նշանակէ նիստեր, ժողովներ։ Մագամաթ բառը յատկացուած էր խալիֆայից արքունեաց մէջ եղած նիստերու, որոնց ուսումնական և մանաւորապէս քերականական խնդրոց վրայ հառաջաբութիւն կ'ընէր գիտնականաց ակումբը։ Շարունակութիւն կրնան համարուիլ ցայժմ եղած նիստերը՝ մանաւորապէս Ռամազան ամսուն մէջ՝ երբ սրճանոցները կը ժողովին գրասիրաց բազմութիւն մը Անդար, Էլ-Զիր, և այլն վէպերու ընթերցման։

3. ՀԱՐԻՐ (حرير) մետաքս կը նշանակէ, իսկ ՀԱՐԻՐԻ (حريري) մետաքսի վաճառական, կամ մետաքսեղէն։ Հարիրին հայրը մետաքսի վաճառական էր։ Ահա Հարիրին ցեղաբանութիւնը։ Ապու Մուհամմատ էլ-Գասէմ պին (որդի) Ալի, պին Մուհամմատ պին Օսման էլ-Հարիրի, Էլ Գուսրի (Պասրացի)։

digitised by A.R.A.R.@

նշանաւոր է իր արմաւենեաց ծառաստաններով. կ'ըսուի թէ Հարիրին 18,000 արմաւի ծառ ունէր որոնց եկամուտովը կըրցաւ բոլորովին հանգիստ ապրիլ ինքզինքը ուսման նուիրելով։ Խալիֆայից արքունեաց մէջ՝ գրագիտաց և բանաստեղծներու խմբին մէջ դասուեցաւ և քաղաքական մեծ դեր խաղաց այն խառնակութեանց ժամանակ՝ որոնց հետեւանքը պիտի ըլլար խալիֆայութեան անկումը և Սելճուքեանց ձեռքով աւատական իշխանութեան սկզբնաւորումը. այլ աւելի մեծ է Հարիրիի գրական դերը իր ժամանակին բոլոր գրագէտները գերազանցելով. 1122ին վախճանեցաւ իր ծննդավայրին մէջ։

*

3. Հարիրիին գլուխ գործոցը. Մագամաթը. — Հարիրիի գլուխ գործոցն է իր Մագամաթը։ Գրութեան շարժառիթն, ինչպէս ինքն իսկ հեղինակն իր գրոց յառաջաբանին մէջ կը պատմէ, եղած է մեկենասներու խրախոյսն ու գովեստը, այլ թէ այս նշանաւոր գրութիւնը որուն ընծայուած է՝ այս մասին կը տարբերին աւանդութիւնք։ Հարիրիի որդին Ապու-էլ-Գասէմ-Ապտուլլահ կ'աւանդէ այսպէս։ «Նստած էր օր մը հայրս Պանի Հարամ[1] (Հարամ ազգին) մզկիթին մէջ երբ յանկարծ ներս կը մտնայ ճամբորդի հագուստով մարդ մը, կը հարցնէ իր ժողովուրդը՝ անունը և մականունը. նա կը պատասխանէ Ապու Զայտ էլ Սարուճի[2] ابو زيد السروجي (Ապու Զայտ Սարուճցի) եմ. այն ատեն հայրս շարադրեց 48րորդ մագամաթը որուն վերնագիրն է Էլ-Հարամիեաղ الحرامية (Հարամ ազգի նկատմամբ) և ընծայեց զայն Ապու Զայտին որուն անունը արդէն հռչակուած էր. ասով հօրս համբաւը տարածուեցաւ և Շարաֆ-էլ-Տին Ալ-Հուչիրուան վեզիրը լսելով՝ խրախուսեց հայրս ուրիշ մագամաթներ ալ գրելու. հայրս ասոր յորդորին մտիկ ընելով ձեռք զարկաւ գրելու և լրացուց 50 մագամաթ և ընծայեց զայն (վերոյիշեալ) վեզիրին»։ Այլ Գահիրէի մէջ գտնուեցաւ ձեռագիր մը բուն Հարիրիին ձեռքով գրուած, որուն սկիզբը՝ հեղինակը կը տեղեկացնէ թէ ընծայած է իր Մագամաթը Ճեղայ-էլ-Տին Ապի-էլ-Հասան վեզիրին. հեղինակին վաւեր ձեռագիրը անշուշտ աւելի արժանահաւատ է։

Հարիրին այնպիսի շրջանակի մը մէջ կ'ապրէր՝ յորում իր փառաց նախանձորդները բազմաթիւ և զօրաւոր էին։ Խալիֆաներուն վեհանձնութիւնը որ առատաձեռնութեամբ կը վարձատրէր արքունի գրագիտաց հանճարին արտադրութիւնները իրենց արժանեաց ատիճանին համեմատ, մրցման եռանդը կը վառէր իրենց մէջ, միանգամայն և բաղդին յաջողութեան կամ ձախողութեան պատճառաւ՝ իրարու դէմ ատելութիւն, ինչպէս Հարիրին կրեց իր ժամանակակից գրագէտներէն։ Քիմայ-էլ-Տին Ապու-էլ-Հասան, Այի Պին Եուսուֆ։ Հալէպի վեզիրը, այլ և այլ ձեռագիրներէն առնելով կ'աւանդէ հետեւեալ պատմութիւնը. «Հարիրին նախ և առաջ 40 մագամաթ շարադրած էր. արքունեաց գրիչները չկարենալով հանդուրժել անոնց գեղեցկութեան և հետեւաբար հեղինակին փառքին՝ կը ջանային ի դերեւ հանել Հարիրիին համբաւը՝ ընծայելով այն հակայ գործը հնդիկ մատենագրի մը որ Պարսայի մէջ մեռնելով՝ իրեն գրութիւնը Հարիրիին ձեռքը ընկած են որ իրեն կը սեփականէ։

1. Պանի-Հարամ. (հարամեան ազգ) արաբացւոց նշանաւոր ցեղերէն մին է,

2. Սարուճ (سروج) Միջագետաց քաղաք մ'է որ Խաչակրաց ատեն առնուեցաւ. կ'ըսուի թէ Ապու-Զայտին մէկ դուստրը գերի կը տարուի և Ապու-Զայտ ամէն բանէ մերկացած՝ կ'ընտրէ թափառաշրջիկ կեանքը. իր փիտութեամբը, քերթողական հանճարովը և հռչակաւոր հարտասանութեամբը հարելով իր ապրուստը՝ ժողովրդեան ողորմութենէն։ Սարուճ անունը հայերէնի մէջ Սըրճ ձեւով կը գտնենք ասորական անուններու մէջ. օրինակ ելն Ցակոբ Սրճեցի, և այլն։ Ըստ այսմ կարող ենք Ապու-Զայտ Սրճեցի եւս ըսել։

digitised by A.R.A.R.@

խալիֆան լսեց և ուզեց ստուգել խնդիրը. Հարիրին ատեան կանչեց, ուր իրեն ա-ռաջարկուեցաւ շարադրութեան նիւթ մը. նա անկիւն մը կը քաշուի և կը սկսի մտա-ծել իր գրելիքը. բայց ատենի վեհութիւնը և բազմականաց ներկայութիւնը իրեն վրայ ազդեցութիւն կ'ունենան. կը բռնուի միտ-քը և անկարող կ'ըլլայ բան մը գրելու. կը նախատէ գինքը Ապի-էլ-Գասեմ պին ալ-ֆիսի արքունի բանաստեղծը՝ որ ամե-նէն աւելի կ'աշխատէր Հարիրին փառքը նուազեցնելու։ Այս նախատինքով Հա-րիրին կը դառնայ հայրենիքը. բայց այս պատահական միջադէպը չկրցաւ տեւական ազդեցութիւն ունենալ Հարիրին տաղան-դին և հանճարին վրայ. քիչ ատենէն ու-րիշ 10 մագամատներ ալ շարադրեց զրոս ներկայացնելով գիտնականաց կաճառին այլ եւս տարակոյս չմնաց բուն մագա-մաթի հեղինակ ըլլալուն և ժողովրդեան ծափահարութեան արժանացաւ»։

Մագամատ գիրքը բաղկացած է 50 մագամաթներէ որ իրարմէ տարբեր նիւ-թեր կը պարունակեն, թէպէտ և իրենց մէջ կապակցութեան ձեւ մը կը նշմարուի։ Մագամատը, ամբողջ յանգաւոր արձակ չէ. ամէն մագամաթի մէջ խօսողը կ'ընդ-հատէ յանկարծ իր խօսքը այս բառով وأنشأ (և երգեց) և կը սկսի ոտանաւոր երբեմն կարճ և երբեմն եր-կայն և ապա կը շարունակէ դարձեալ արձակը։ Ամէն Մագամաթ հետեւեալ բա-ռերով կը սկսի. « կը պատմէ էլ-հարիզ պին համմամ, կ'ըսէ قال الحارث بن همام حدث իբրեւ թէ ուրիշ անձնաւորութեան բեր-նով խօսէր։ Բնիկ արաբագէտներ շատ մեկնութիւններ տուած են այս նախա-դասութեան, և հասարակաց կարծիքն է թէ պէտք չէ ուրիշ անձնաւորութիւն մը մտցնել հոս. Հարիրին է որ երրորդ դէմ-քով կը խօսի։ Հարիզ = մշակ. պին որդի. համմամ = աշխատասէր. Հարիրին իր վը-րայ կը դարձնէ Ղուրանին այս խօսքը كلم حارث وكلم « Ամէնքնիդ մշակ (հարիզ), ա-մենքնիդ աշխատասէր (համմամ)» արդ այս ածականները ամէն մարդու ուղղելով Ղու-բանին գրիչը՝ Հարիրին գոյականաբար կ'առնէ այն անունները մին իրեն և միւսը իր հօրը վրայ, և երրորդ դէմքով խօսելը արդէն իսկ արաբացի շատ մը պատմիչ-ներուն նախասիրած ոճն է։ Մագամաթ գիրքը յառաջաբանով մը կը սկսի, որուն մէջ Հարիրին կը յիշատակէ մեկենասին յորդորը, և երկայն և գեղեցիկ աղօթքով մը Աստուծոյ օգնութիւնը կը խնդրէ դժուարին գործը ի գլուխ հանելու համար իր անձին անբաւականութիւնը խոստովանելով, և 50 մագամաթէն վերջ կը կնքէ իր գիրքը վեր-ջաբանով, խոստովանելով թէ « այսչափ է իմ կարողութիւնս », թողութիւն խնդրելով Աստուծմէ այն ակամայ սխալմանց և պա-կասութեանց համար որ կրնան սպրդած ըլլալ իր գրութեան մէջ։

Քիչ գրուածներ այնչափ մեծ ազդեցու-թիւն ունեցած են գրական ասպարիզին մէջ որքան Հարիրին մագամաթը, որ նոյն իսկ հեղինակին կենդանութեան ատեն իր անունը անմահ հանդիսացուց։ Կարելի չէ խորին կերպով թափանցել արաբական լեզուին քերականական նրբութեան, շա-բադրութեան տարօրինակութեանց, մահ-մետական հռետորութեան ուսման մէջ, ա-ռանց խորին ուսումնասիրութիւն մ'ըրած ըլլալու Հարիրին Մագամաթին, որ արաբ լեզուի գանձ մ'է, և միշտ գեղեցիկ դը-պրութեանց ամենէն նշանաւոր նախատիպ-ներէն համարուած է. չկայ արաբացի քերականագէտ մը, բանաստեղծ մը, հռետոր մը, որ չունենայ իր առջեւը Հարիրին գիրքը։

Հարիրին, իր նախորդին Համատանին հետեւելով – թէպէտ շատ կը գերազանցէ զայն – իր մագամաթին դիւցազն կ'ընտ-րէ զԱպու Զայտ Յարոռձցի ամենագիտուն մուրացկանը, այն անձնաւորութիւնը որ արաբական մատենագրութեան մէջ շատ մեծ դեր խաղացած է. և թէպէտ իր գոր-ծերուն և իր հանճարին զարմանալի ար-տադրութեանց վրայ թերեւս ներելի է տա-բակուսիլ, բայց ոչ նաեւ իր անձին իրա-կան ըլլալուն վրայ։

digitised by A.R.A.R.@

Հարիրին զանազան գոյնզգոյն պատկերներով կը ներկայացնէ զԱպու Զայտ, ամէն նիւթոց վրայ հառել կու տայ (ինչպէս կը տեսնուի մագամաթի նիւթոց ցանկէն)։ Մերթ կը ներկայացնէ զայն իբրեւ բարոյագէտ մը, տեղեակ օրինաց և արարողութեանց Ղուրանի, վսեմ և բարձր ոճով մը վարդապետող. մերթ իբրեւ խեղկատակ մուրացկան մը, որ իր լեզուին ազդեցութեամբ կը շարժէ ժողովրդեան սիրտը իրեն ողորմութիւն տալու, երբեմն գինով, անառակին մէկը, և երբեմն ապաշխարող, բերանը այնպիսի գոչական աղօթքներ դնելով որ միայն քրիստոնէութեան մէջ գոյութիւն կրնան ունենալ։ Միշտ Ապու Զայտ է խօսողը և գործողը, որուն տաղանդին թռիչը մերթ վսեմութեան կատարը կը բարձրանայ բարձր և իմաստասիրական նիւթոց վրայ խորհրդածելով, և մերթ յանկարծ գահավէժ կ'իջնայ նուաստ ակնարկութեանց, որ արաբ մատենագրաց յատուկ ունակութիւն մ'է։ Մագամաթը մեծ մասամբ բարոյականի շուրջը կը դառնայ, և Ապու Զայտ միշտ հաւատարիմ քարոզիչ մ'է Ղուրանի Սահմանադրութեանց, և հետեւող Շաֆիյի[1] աբարողութեանց։ Ամէն բանի մէջ յայթող կը հանդիսանայ. իրբեւ քերականագէտ, կը պապանձեցնէ ամէն իրեն հետ վիճաբանողները՝ իրեն լուծումներովը, և իր կատարեալ հմտութեամբը քերականական կանոնաց և մեկնութեանց. սրամիտ է. կը պատօխանէ ամէն երկդիմի հարցմանց և լեզուական առեղծուածներու, նմանաձայն այլանիշ բառերով՝ արտասովոր յիշողութեան մը ձիրքն եւս ունենալու ապացոյցը կու տայ։ Իրբեւ բանաստեղծ՝ զանազան պատմական դիպուածներ, այլ և այլ դէմքեր կը ստեղծէ որոնց շատերը իր անձին, իր որդւոյն, իր կնոջ, և ժամանակակիցներու շուրջը կը դառնան. ունի սքանչելի ոտանաւորներ և բանաստեղծական նմանութիւններ, որոնք ոչ միշտ այնչափ նուրբ և ազնիւ՝ այլ միշտ Մուսայէն ներշնչուած ըլլալնին կը յայտնեն։ Կատարեալ դերասան մ'է Ապու Զայտ, որ ամէն տեսարան թատրոնի վրայ կատարեալ յաջողութեամբ ներկայացնելու ձիրքն ունի. և շատ անգամ իր դիտած նպատակին հասնելէն վերջ, կը յայտնուի իրեն ո՛վ ըլլալը, որով իր վարպետ գործերը՝ իր հանճարին փայլը աւելի շողշողուն կ'երեւցնեն։ Իրբեւ ճարտասան՝ յաղթող կը հանդիսանայ ամէն պայքարի մէջ. իր ճարտասանութիւնը զօրաւոր է ոչ այնչափ իմաստներու այժով և առատութեամբ որչափ հռետորական ձեւերու գործածութեամբ, բառախաղերով, և հոմանիշներու նմանաձայն բառերու հարբուտութեամբ, որոնք այնչափ խճողուած են՝ որչափ ներդաշնակ։ Իր լեզուն անոյշ է. ամենուն սիրտը իրեն կը գրաւէ, ներդաշնակ է՝ լսելիքը դիւթելու, փափուկ՝ սիրտը թովելու չափ, համոզիչ՝ իր դատը պաշտպանած ժամանակ. ազդու և խայթող՝ ազահութիւնը, ախտը և մոլորութիւնը կշտամբած ատեն։ Եւ եթէ նկարիչ մը քանի մը վրձինի գծերով գլուխ գործոց մը կը ներկայացնէ, Ապու Զայտ փոքրիկ իմաստ մը, քանի մը ներդաշնակ հոմանիշներովը բանաստեղծական դասական ուսումնասիրութեան արժանի էջեր կ'արտադրէ, որոնցմով կազմուած է իր Մագամաթը ծայրէ ի ծայր։ Գաղափարները համառօտիւ կը շօշափէ. փոփոխական ձեւերով, յանգաւոր հոմանիշներով անոնց բացատրութիւնը կը կրկնէ, առանց յոգնեցնելու ընթերցողին միտքը, ճարտարութեամբ կը գրաւէ զայն զանազան ձեւակերպութեամբ, յանկարծական անոյշ ձայներ լսեցնելով. արաբական ականջը ըզգայուն է այս մասին. միով բանիւ, ընթերցողը ոչ միայն չի ձանձրանար այլ և կը հեշտանայ լեզուին նրբութեամբ, և ներ-

---

1. ՇԱՖԻՅԻ شافعي հայ. ՇԱՖԻՅԻ (شافع) հետեւող՝ Շաֆիյ, (Խորիս, Ապու. Ապա-ուլլահ). ՖաՀիկ վարդապետ մ'է Գազա ծնած (767–821), Շաֆիյիաթ شافعية դպրոցի հիմնադիրն։ Մին է սա չորս մեծ Մահմեդական բարոյագէտներէն, որ կրցան ունենալ Մահմեդական օրինադրի տեղաւոր։ Շաֆիյի վարդապետութիւնը ամենէն աւելի Եգիպտոսի մէջ տարածուած է։

digitised by A.R.A.R.@

դաշնակութեամբ որ յատուկ է արաբերէն լեզուի. — և ահա ասոր մէջ կը կայանայ Հարիրիին մեծութիւնը, իր եզականութիւնը՝ յանգաւոր արձակ գրութեան մէջ։ Այլ այսպիսի գեղեցիկ գործ մը, որ արաբացւոց մատենագրութեան գոհար մ'է, ցարդ անմատչելի մնացած է միջազգային գեղեցկագիտաց. նախ և առաջ լեզուին խրթնութեան պատճառաւ. մագամաթներէն շատերը զուտ քերականական առեղծուածներ են որոնց լուծումը արաբերէնի շատ հոմանիշներու գիտութեան և աշխոյժ յիշողութեան մէջ կը կայանայ. յետոյ՝ իմաստներու ոյժը որ կայացած է արաբ. շեշտին և ըսելու կերպին մէջ՝ թարգմանութեամբ շատ կը թուլնայ, ուրիշ որ և է լեզու արաբերէնի նման բառախաղի և հոմանիշներու յարմարութիւն չունենալով։ Բաց ասոնք Հարիրին թարգմանելու համար խոր հմտութիւն կը պահանջուի արաբ լեզուի, ինչ որ օտար ազգաց դժուարին է ստանալ, քանի որ նոյն իսկ արաբ ժողովրդեան բոլորովին անհասկանալի է, ու գրագիտաց ալ ուսումնասիրութեամբ և բառգրքի օժանդակութեամբ մատչելի։ Նմանապէս կը պահանջուի կատարեալ տեղեկութիւն Ղուրանի և արաբացւոց յատուկ ժողովրդական աւանդութեանց, զորս կ'ակնարկէ հեղինակը, առանց որոց շատ տեղեր բառական թարգմանութենէ ոչ մէկ իմաստ կը ստացուի։ Արաբացւոց Ցանդէն կրնայ կոչուիլ Հարիրին, այս տարբերութեամբ որ եթէ Աստուածային կատակերգութեան խրթնութիւնը աւելի իմաստից և պատմական ակնարկութեանց մէջ է՝ Մագամաթի խրթնութիւնը անոր հակառակն է[1]։

Նմոյշ մը ընծայելու համար մեր ընթերցողաց՝ պիտի թարգմանենք արաբական բնագրէն 11որդ մագամաթը, որ չի բո-

1. ԺԲ դարուն սկիզբը Silvestre de Sacy հրատարակեց Մագամաթի գիրքը յառաջաբանով և մեկնութեամբ արաբերէն լեզուով։ Եղած են նաեւ երկու արաբական հրատարակութիւնք հանդերձ մեկնութեամբք, և ծանօթութեամբ ի Պէյրութ, 1886ին և 1888ին։

վանդակեր այն անպատշաճութիւններէն՝ որ ինչպէս ըսինք, սովորական են արաբ մատենագրաց քով։

*

4. Հարիրիին այլ գրութիւնները. — Հարիրին, Մագամաթէն զատ ունի այլ գրութիւններ, երկու նամակներ՝ որոնց ամէն բառերը س — ش, կամ ش — س գրերով կը սկսին, տղայական խաղ մը՝ թէպէտ և շատ դժուարակնճիռն. այսպիսի շարադրութիւններ ախորժելի էին արաբելքի մէջին դարու ճաշակին։ Ուրիշ քերականական գրութիւն մ'ալ իր ժամանակին գիտնականաց սովորական գործածած լեզուի պակասութեանց վրայ, զոր կ'անուանէ Ցուրրադէ-Ղառաս ֆի առհամ-էլ-խառաս درة الغواص في اوهام الخواص (Աշխարհիկ մարդկանց մոլար գաղափարաց մէջ ընկղմած են մարգարիտները)։ Ունի նաեւ ուրիշ քերականական գիրք մը, Մուհար-էլ-Իյրապ (քերականական զուարճութիւն) զոր M. L. Pinto գաղղիերէն թարգմանած է։ Ունի նաեւ շատ ոտանաւորներ որոնց մէջ կը գտնուի այն խօսքը զոր պատասխանեց իրեն այցելութեան եկող մարդու մը՝ որ իր տգեղ դէմքը տեսնելով արհամարհեց. « Մարիկ ըբէ ինձ և գիս մի տեսնար » اسمع لي ولا ترني

Հ. Պ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Շարայարելի

"ԱՂԲԻՒՐ" ԵՒ "ՏԱՐԱԶ"

Պատկերազարդ ամսագիրներու խմբագրութիւնը, 1907ին, Աղբիւրի քսանհինգամեայ յոբելեանի առթով աշխատակցութեան կը հրաւիրէ իր բոլոր նախկին յօդուածագիրները, որոնց պատկերներու Ալբոմը պիտի հրատարակէ Հոլանտայի մէջ, խնդրելով անոնց լուսանկարները, հասցէները, յօդուածներու ցանկը։ Ցորեղեանի թիւը պիտի գերազանցէ իր բոլոր նախորդները, և պիտի վաճառուի չնչին գնով։ ԱՂԲԻՒՐԸ, ՏԱՐԱԶԸ և ԱԼԲՈՄԸ Ռուսաստան կ'արժեն 5 ռուբլի (մինչդեռ առաջ կ'արժէին 10 ռուբլի միայն Աղբիւրը և Տարազը), արտասահմանի համար՝ 10 ռուբլի, իւրաքանչիւրն առանձին 5 ր. (Ռուսաստան՝ 3 ր.)։ 1906ի բաժանորդները միայն 3 ր. պիտի վճարեն պակաս ստացուած թուերու փոխարէն։ 'Խմբ.' Rédaction « TARAZ » կամ « AGBUR » Tiflis (Caucase)

digitised by A.R.A.R.@